# ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

06.11.2013 11:02



ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի նոյեմբերի 5-ի հրամանով Արթուր Հովհաննիսյանը նշանակվել է Փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ:

Արթուր Հովհաննիսյանը ծնվել է 1980թ. փետրվարի 10, ք. Երևանում

2013 թվականի նոյեմբերի 5-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահի հրամանով նշանակվել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ:

2011-2013թթ. զբաղեցրել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության պետի պաշտոնը:
2010-2011թթ. զբաղեցրել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի եվրաինտեգրման վարչության պետի պաշտոնը:
2008-2010թթ. զբաղեցրել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի դատաիրավական բարեփոխումների վարչության պետի պաշտոնը:
2006-2008թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի դատաիրավական բարեփոխումների վարչության քրեակատարողական ծառայության բարեփոխումների բաժնի պետի պաշտոնում:
2003-2006թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի դատաիրավական բարեփոխումների վարչության իրավական բարեփոխումների բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:
2002-2003թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքային բարեփոխումների վարչությունում՝ որպես առաջատար իրավախորհրդատու:
2001-2002թթ. աշխատել է «Երևանի էլեկտրացանց» ՓԲԸ-ում՝ որպես առաջատար իրավախորհրդատու:
2000-2001թթ. աշխատել է «Երևանի էլեկտրացանց» ՓԲԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:
1999-2000 աշխատել է «Արթաղ» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:
Կրթություն
2013 թվականի հունվար-հունիս ամիսներին մասնակցել է հանրային քաղաքականության և հանրային կառավարման վերաբերյալ Թաֆթս

համալսարանի ֆլետչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցում կազմակերպված դասընթացներին:
2001-2003թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում՝ ստանալով միջազգային հարաբերությունների մագիստրոսի աստիճան:
1997-2001թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան:
1987-1997թթ. սովորել է Երևանի թիվ 120 միջնակարգ դպրոցում:
Այլ տեղեկություններ
Անկուսակցական է:
Ամուսնացած է, ունի երկու երեխա:
Ունի քաղաքացիական ծառայության առաջին դասի խորհրդականի դասային աստիճան:
2013թ. նոյեմբերի 4-ից ՀՀ փաստաբանների պալատի անդամ է:

Նախորդ նորությունը: ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԻՐԱՎԱԲԱՆԻ ԿՈՉՈՒՄ Է ՍՏԱՑԵԼ

Հաջորդ նորությունը: ԻՐԻՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՇՆՈՐՀՎԵԼ Է ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

## Առաջարկվող նորություններ




**25.10.2013**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ



**07.11.2013**ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԵԿՆԻ ԱՐՑԱԽ



**11.11.2013**ԱՄՓՈՓՎԵԼ Է ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ



**20.12.2013**ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ

ԱՄԵՆԱՏԱՐԵՑ ՓԱՍՏԱԲԱՆԸ 90 ՏԱՐԵԿԱՆ Է

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })